

ՄԱՅՐԱԿԱՆ ԻՐԱՌՈՒՆՔԸ

(Տեսութիւն հայ սովորութեան իրաւունքից)

Խ. ՄԱՍՈՒԷԼԵԱՆԻ

XIII

Հայ ժողովրդական վիպական բանահիւսութեան մէջ ցրուած կան բազմաթիւ բնորոշ կէտեր, որոնք բովանդակում են մայրական իրաւունքի շրջանի բնատանեկան յարաբերութիւնների մի քանի էական դժեր: Բոլոր մեր ժողովրդական վէպերում աչքի է զառնում մի փաստ, որ այր մարդիկ անցողակի ու դիպուածական ամուսնական յարաբերութիւն են ունենում այս կամ այն կնոջ հետ, միայն ժամանակաւոր ամուսնական կապեր պահպանում. դա ապացոյց է պատերնիտետի դադարի բացակայութեան և ընդհանրապէս մայրական իրաւունքի տիրապետութեան, երբ ամուսնական կապերը, լինելով խմբակցական, հիմնուած էին լոկ կարճատև սեռական յարակցութեան վրայ: Նոյն իսկ օրինաւոր անուսնած ամուսնութիւնն էլ հայ ժողովրդական վէպերի հերոսների համար տևողական, մշտական բնոյթ չի կրում: Այդ ամուսնութիւնը չի կաշկանդում հերոսներին, որոնք յաճախ երկար ժամանակով, երբեմն իսկ մշտապէս թողնում են իրենց, «օրինաւոր» կնոջը և այդ ժամանակամիջոցում յարակցութիւններ ունենում ճանապարհորդութեան ժամանակ հանդիպած կանանց հետ: Այդ ամուսնական անցողակի յարաբերութիւններից ծնւում են զաւակներ, որոնք մի՛թ մասամբ չեն ճանաչում իրենց հօրը և մեծանում, ապրում են միայն իրենց մօր մօտ, սրան հպատակւում, սրան պաշտպանում և սրա համար վրէժխնդիր լինում. այդ զաւակները սովորաբար ճանաչւում են իրենց մօր անունով, քանի որ սրա հետ միասին են ապրում: «Սասմայ ծոբրում» տեսնում ենք, որ Դաւիթը յարակցութիւն է ունենում Չմշկիկ Սուլթանի հետ, մնալով միայն մի դիշեր սրա մօտ, որից ծնւում է որդի: Մհերը. մինչև 15 տարեկան հասակը չի ճանաչում իւր հօրը և վեր-

ջապէս ճանապարհ է ընկնում նրան գտնելու: Նոյնն ենք նկատում Շիրին շահ և Բահր ժողովրդական վէպում: Սև սարի թագաւորը օտարութեան մէջ ամուսնական յարաբերութիւն է ունենում մի կնոջ հետ և ապա վերադառնում է հայրենիք: Այդ կինը ծնում է որդի՝ Բարակ Շահին, որ չէր ճանաչում բնաւ իւր հօրը և դիւղի տղայքն էլ նրան բոժ էին անուանում, որովհետև հայրն անյայտ էր: Բարակ Շահն էլ ամուսնական անցողակի յարաբերութեան մէջ է մտնում նախ՝ Լէնկթէմուրի աղջկայ և ապա՝ Մէշի մի աղջկայ հետ, որից ծնւում է Շիրին շահը, որ նոյնպէս չի ճանաչում իւր հօրը և միայն իւր մօր խորհուրդներով է ղեկավարւում, սրա խնամքով ու հոգատարութեամբ է մեծանում*):

Ամուսնական անցողակի յարաբերութիւնների նոյն գաղափարն է պարփակուած հայկական մի սիրուն առասպելի մէջ, որ վերաբերում է Քօյրի Բէօլ անունով կամրջին: Մի օր աղքատ հովերն աներևոյթ ձիաւոր տանում իջեցնում է մի անյայտ երկրի, թագաւորի աղջկայ մօտ: Հովիւը այդ գիշեր հարսանեկան փառահեղ շորեր հագած ամուսնանում է աղջկայ հետ ու առագաստ մտնում: Առաւօտեան արշալոյսին նոյն աներևոյթ ձիաւորը մի ակնթարթում այդ հովւին նորից իջեցնում է հայրենի գիւղը, սրա աղքատ խրճիթը: Թագաւորի աղջիկը յղիանալով ծնում է զաւակ, որ միշտ լաց էր լինում և անպատճառ ուղւում էր իր հօրը տեսնել: Յուսահատուած մայրը սկսում է որոնել տղայի հօրը: Երկար ճանապարհորդութիւնից յետոյ թագաւորի աղջիկը գալիս է անգիտակցաբար վերոյիշեալ հովւի գիւղը և սկսում է այստեղ գետի վրայ մի կամուրջ կառուցանել, որի համար վարձում է բազմաթիւ մշակներ, որոնց թւում լինում է նաև այդ հովիւը: Սակայն հիշ թագաւորի աղջիկը, ոչ էլ հովիւը իրար չեն ճանաչում: Մի օր թագաւորի աղջիկը, որի երեխան դեռ շարունակում էր միշտ լաց լինել, դիպուածով տալիս է մշակներից մէկի գիրկը, իւր լացող երեխային, որը իսկոյն և եթ կտրում է աղիողորմ լացը: Սրանով մայրը իսկոյն իմանում է, որ դա երեխայի հայրն է: Յիրաւի դա աղքատ հովիւն էր, և երեխայի մայրը այսպիսով գտնում է իւր նախկին ամուսնուն, որ միայն մի գիշեր էր նրա հետ եղել **):

Ժողովրդական վիպասանութեան մէջ մեր նկատած մայրա-

*) Ս. Հայկունի—Շիրին Շահ և Բահր. Էմինեան ժողովածու, հատ. ք. եր. 99—104.

**) Լումայ, 1904 թ. № 3. եր. 157—158. Նաև Նոր-Դար, 1893 թ. №№ 38—39.

կան իրաւունքի (մատրիարխատի) շրջանին առանձնապատուկ այդ անցողակի, կարճատև ամուսնական յարաբերութեան մնացորդներ կարող ենք գտնել ժամանակակից հայ ժողովրդի հարսանեկան մի հետաքրքիր սովորութի մէջ: Առաջատիւ առաջին գիշերից յետոյ առաւօտեան կանուխ փեսան անհատելի բնոր տնեցիներէից փախչում է որևէ բարեկամի մօտ և ամբողջ օրը ոչ ոքի չի երևում, մինչև որ մակարները նրան գտնում են և մեծ հանդիսով տուն բերում: *) Միայն խմբակցական ամուսնական կարգերում երբեմն տիրապետող անհաստատ ու դիպուկածական սեռական յարաբերութիւնների սովորութիւն է, որ այնպէս պահպանուել է փեսայի կեղծեալ փախուստի մէջ, իբրև մի հասարակ ձևականութիւն, որով արտայայտւում է, թէ ինչպէս իւրաքանչիւր այր մարդ այս կամ այն կնոջ մօտ էր գնում իւր կարճատև ամուսնական կապերի համար և, միայն մի գիշեր անցկացնելով, հեռանում էր:

Այդ ամուսնիներէ հետ մշտական կամ տևական կենակցութեան բացակայութիւնը բնականօրէն զարգացնում էր կանանց ինքնուրոյնութիւնն եւ անկախութիւնն հասարակական փոխադարձ յարաբերութիւններում. զարգացնում էր նրանց իրաւունքները իրենց որդիների ու շրջապատողների նկատմամբ: Ահա այդ գծերը զարմանալի ցայտուն կերպով են աչքի ընկնում ժողովրդական մեր վէպերում: Կանայք իրենք են տնօրինում իրենց բաղդը, իրենց քէֆով ու ցանկութեամբ են անձնատուր լինում այր մարդկանց, սեռական յարաբերութիւնների մէջ մտնում իրենց հաւանած մարդու հետ: Աւիժածէ Մհերին կամ Սանասարին կանչում է Մսրայ Մելիքի կինը, որ իրեն առնի և Մարումն էլ թաղաւորութիւն անի: Այսպէս է Սանդուտ Սանումը, որ շրջապատուած 40 փահլեան փեսացուներով, այնուամենայնիւ երգիչների միջոցով իմաց է տալիս իւր մասին Դաւթին, որի հետ և ամուսնական յարաբերութիւններ է ունենում:

Զարմանալի է, որ հայ ժողովրդի մէջ մի քանի տեղերում մնացել են յիշատակներ, որոնք ապացուցանում են, թէ եղել է ժամանակ, երբ կանայք իրենք էին իրենց համար այրմարդ կամ փեսացու որոնում: «Փառակայում (Գողթանում) աւանդաբար պատմում են, թէ հին ժամանակներում իրենք աղջիկներն էին ընտրութիւն անում և ոչ թէ տղաները: Եւ ում հետ որ կամենում

*) Ազգագր. հանդէս VIII հատ. եր. 165-Վայոց ձոր: Ե. Լալայեան-Վարանդա, եր. 143.

Արձագանք 1897 թ. №№ 17, 22, 23, 27 29 Վան:

էին ամուսնանալ, գնում էին նրա տան հերթիքից մլաւում։ Ուշադրաւ է նաև այն, որ Աղէքսանդրապօլում, երբ մի աղջկայ համար կամենում են ասել, թէ ցանկանում է ամուսնանալ՝ հեղնում են, թէ մըռնիաժու է կանչում։*)

Կանանց այդ ինքնուրոյն և անկախ կենցաղը միանգամայն ազատ այրմարդկանց ազդեցութիւնից և իշխանութիւնից, առիթ է տալիս ժողովրդական վէպին կանանց տեսնել օժտուած այնպիսի ձիրքերով ու ընդունակութիւններով, որոնք յիշաւի մայրական իրաւունքի տէրերին միայն կարող են պատկանել ու մայրականութեան են առանձնայատուկ։ Հայ ժողովրդական վէպերի գրեթէ բոլոր կանայք հռչակում են իբրև իմաստուն, կարգացաւոր, անվեհեր և ուժեղ, որոնք քաջութեան մէջ յետ չեն մնում տղամարդերից և նոյն իսկ դիւցազններից։ Բաւական է այստեղ յիշատակել Պանդուկ Պաթունն, Մովսէլ Պանումը, Քարսուն-Ճիւղ-Մամ և այլն։ Վերոյիշեալ կանայք հայ վէպերում օժտուած են այնպիսի յատկութիւններով ու առաւելութիւններով, որոնք ժամանակակից հայրիշխանական (պատրիարխատական) ծագումն ունեցող ժողովրդական հէքիաթներում, առածներում և կամ այլ բանահիւսութիւններում միանգամայն բացակայում են կանանց նկատմամբ։ Ընդհակառակն ներկայումս շնորհիւ հայրիշխանութեան տենդեցների ու գաղափարների արքայետութեան, կանայք ներկայացւում են ստորագրեալ, անկախութիւնից և ինքնուրոյնութիւնից զուրկ էակներ, որոնք հանապաղ ենթակայ են նահապետի և իւր ամուսնու բացարձակ իշխանութեանը, անսահման կամքին։

XIV

Մենք տեսանք, որ մայրական իրաւունքի գլխաւոր հիմքը կազմում է այն գիտակցութիւնը, թէ սերունդները ծագում են մօրից, թէ ազգակիցները կրում են իրենց երակների մէջ ընդհանուր մայրական արիւն և միևնոյն ժամանակ մի գիտակցութիւն հայրական ընական ծնողութեան անհաստատութեան մասին։ Այս գիտակցութեան շնորհիւ ազգակցական կապերը հաշւում են կանացի՝ մօր գծով, որովհետև ժառանգները ճանաչում են իբրև ծնող միայն իրենց մօրը և ոչ թէ հօրը, որ շատ անգամ անյայտ է, քանի որ խմբակցական ամուսնական ձևերի պատճառով մի կին կարող է բազմաթիւ այր մարդկանց հետ սեռական յարաբերութիւն ունենալ։ Զաւակների ու հօր միջև չեն կարող գոյութիւն

*) Ազգագր. հանդ. հատ. XII, եր. 119.

ուսննալ ոչ մի կապ ու յարաբերութիւն, որովհետեւ հայրը ուրիշ ցիղից է, օտար սերնդական խմբի մէջ է ապրում: Ուստի բնական է, որ սովորութիւն է տիրում զաւակներին ճանաչել ըստ մօր և կոչել մօր անունով:

Հերոգոտը պատմում է, որ լիւկեացիներն իրենց կոչում են մօր և ոչ հօր անունով: Եթէ մէկը հարցնի իր հարեանին, թէ հօրից է ծագել, նա իսկոյն կը պատմի իր սերնդական ճիւղաւորութիւնն մայրական կողմից և մի առ մի կը յիշատակի իր մօր մայրերին: Այս վկայութեան վրայ մատնացոյց անելով, Բախօֆէնը հաստատում է այդ փաստը նաև վերին աստիճանի հետաքրքիր երևոյթով: Հնախուդական պեղումների շնորհիւ գտնւած լիւկիական մահարձանները կրում են իրենց վրայ հանգուցեալների միայն մօր անունները: Սոյնանման վկայութիւններ հին ազգերի վերաբերմամբ ներկայումս հնագիտական նիւթերի մէջ բաւական կան, մանաւանդ փրնիկեցոց, լօկրերի և այլոց մասին: Այս տեսակ երևոյթների հետքեր պահպանւել են նաև հայերի մէջ:

Հայ ժողովրդի մէջ կան առածներ. «եկողը մօրս հալն ա հարցնում, հօրս հալն հարցնող չկայ», կամ «հօրս անուն տուող չկայ, քոմմա էլ մօրս են հարցնում»։ Կամ երդում՝ «մեր մէր ու որթութիւնը զիտենայ» և անէծքը՝ «քու մօր որթին թորոնը ընկնի» *) Այդ առածներն ու ասացուածքները ապացուցանում են, որ մեր ժողովրդի մէջ նախնի մայրական իրաւունքի մնացորդները պահպանուել են այն իմաստով, որ մօր անունը, մօր նշանակութիւնն իբրև ծնողի աւելի ստէպ էր յիշուում և աւելի կարևոր էր թւում քան հօրը: Որի նշանակութիւնը միայն նահապետական շրջանում բարձրացաւ: Վերոյիշեալ առածների ծագման մօմենտները պէտք է համարել այն փոխանցական ժամանակը, երբ մայրական իրաւունքի տեղ արդէն հայրիշխանութիւնն էր հաստատուել, ուստի հօր ու մօր նշանակութիւններն ծնողական—գերադաստանական տեսակէտից որոշ մրցման մէջ էին: Իսկ թէ մայրը միշտ յիշուում էր իբրև ծնող, սերունդ առաջացնող, դա երևում է այն փաստից, որ հայ ժողովրդի մէջ պահպանւել են ազգանուններ, որոնք զուտ կանացի են և մատնացոյց են անում, որ այդ սերունդների ծագումը հաշուում են եղել կանացի գծով. սերնդի հիմնադիրը կին է եղել: Այդպիսի մի քանի ազգանուններ գոյութիւն ունեն մինչև օրս հայ գիւղերում՝ ինչպէս Նունուֆարհան, Նաբաթհան, Ընէվահիրեան, Շուշանեան և այլն:

*) Ս. Հայկունի—Էմինեան Ազգագրական ժողովածու, հատ 2.

Քանի որ ազգակցութիւնը ճանաչուած էր մօր զարմով ու մայրը համարուած էր սերնդի, ընտանիքի հիմնադիր և սրան էին ենթակայ որդիներն ու թոռները, անշուշտ և որդեգրութեան դէպքերում, երբ արուեստական եղանակով սերնդի մէջ ընդունուած էր նոր անգամ, պիտի վերջինիս ընտրութիւնը սերնդի մայրն անէր. մօր ձեռքով պիտի կատարուէր որդեգրութեան համաձայնութեան ակտը: Ուստի որդեգրութիւնը տեղի էր ունենում որոշ ծիսով, որ արտայայտուած էր որդեծնութեան ֆիկտիւ գործողութեամբ, այսինքն իբր թէ մայրը ծնում է յիշեալ նորեկին, որով վերջինս արդէն ճանաչուած էր սերնդական ընտանիքի մօր զաւակը: Հին Նախիջևանի գաւառում մէկին որդեգրելիս, կինը անց է կացնում նրան իւր շապկի միջով, իսկ ամուսինն այդ նորեկ զաւակին ընդունում է շապկի տակից: *) Կնոջ այդ գործողութիւնն, որով կատարուած է ծննդաբերութեան ֆիկցիան, շեշտում է միայն այն իրաւաբանական հասկացողութեան վրայ, թէ որդեգրողը համարուած է այսուհետև մօրից սերուած, սրա ազգակից: Նոյնն է Բորչալուի գաւառում. «Իսկ եթէ ոչ մի զաւակ չեն ունենում, այն ժամանակ մինին, սովորաբար ազգական ժառանգին որդեգրում են, նրան երեք անգամ անց են կացնում կնոջ շապկի միջով, իբր թէ նրանից է ծնւում»: **)

Մօր ծնողական նշանակութիւնը, որով արտայայտուած էին մայրականութիւնից բխող իրաւաբանական հասկացողութիւններն ու մօր իրաւունքները իր զաւակների նկատմամբ, երևում է մի շարք ժողովրդական սովորութիւններում: Երբ որդին հարս է բերում տուն, մայրն է առաջինն ընդունում ու հարսին իբր իր աղջիկ ճանաչում. այդ նպատակով հայ ժողովրդի մէջ գոյութիւն ունեն յատուկ և ընտրող ծէսեր: Վարանդայում երբ հարսն քաղերները, եկեղեցուց վերադառնալով, մօտենում են նորափեսայի տանը, «Թագաւորի մայրը մի սկուտեղի մէջ երկու լաւաշ հաց ու մի փոքրիկ ափսէի մէջ կրակ՝ վերան խունկ դրած պտտեցնում է տան չորս անկիւնը, ապա դուրս գալիս և երեք անգամ պտտուած Թագաւորի և Թագուհու շուրջը: Յետոյ մի բարձր տեղից ընկոյզ կամ կաղին շաղ տալիս հարսի գլխին: Ապա մօտենում և համբուրում հարսի ճակատը: ***)

*) Зелинский—Народно-юридическ. обычаи закавказ. армянъ, եր. 6.

**) Ազգագրական Հանդէս, Բորչալուի գաւառ, հատ. X, եր. 132.

***) Ե. Լալայիան—Վարանդա, եր. 140.

թեամբ կատարուում է Գանձակի գաւառում, 1) Աբարանում, 2) Նոր-Բայազէտի գաւառում 3) և այլ ուր 4)

Հարս ու փեսի գլխին մրգեր կամ երբեմն մանր փողեր շաղ տալը մօր ձեռքով այնպիսի համատարած սովորութիւն է հայերի մէջ, որ դարմանալի է, որ նրա հետքերը գտնուում ենք նաև հին հայկական կնանքում, երբ մտաբերենք ժողովրդական հին վէպի գեղեցիկ կտորները.

«Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշիսի,

«Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան»:

Հետաքրքիրն այն է, որ երբ հարսանքաւորները եկեղեցուց հասնում են փեսայի տունը, պիտի միշտ կանչեն բարձր ձայնով և դուռն հրաւիրեն փեսայի մօրը, որի աթիւն նոյն իսկ յատուկ ժողովրդական երգ կայ.

Դուս արի, հայ դուս արի,

Թագուորի մէք, դուս արի և այլն.... 5)

Միւս կողմից ժողովուրդը աղջկայ՝ հարսնացուի՝ մօր ծնողական իրաւունքը, նրա ազգակցական մայրական իշխանութիւնը ճանաչում է նրանով, որ փեսացուի կողմը ղայան, բաշլուդ, մի խօսքով՝ աղջկայ համար գլխագին վճարելիս, պէտք է առանձին վճարի մօրը նաև ծծաղին 6) կամ կաթնէղին 7) և կամ, ինչպէս Բաշ-Շորաղեալում, սորձ հախի կամ կաթնավարձ 8): Սրանով տակաւին պահպանւում է այն գաղափարը, թէ աղջիկը իրօք մօր զաւակն է, նրա մեծացրած, նրա կրթքով ու խնամքով սնած որդին, որի համար էլ առանձին վճարում են:

1) Ե. Լալայեան՝ Գանձակի գաւառ, 34 եր.

2) Գարեգին վրդ. Յովսէփեան՝ Փշրանքներ, եր. 62.

3) «Ազգագրական Հանդէս», հատ. XVI, եր. 26.

4) Բէնսէ՝ Բուլանըխ, եր. 112: Ե. Լալայեանի՝ Սիսիան, եր. 123: Նոյն՝ Զանգեզուր, եր. 81: Շիրակի հարսանիք—Էմինեան Ազգագրական ժողովածու, հատ. Ա, եր. 248: Գողթան գաւառ՝ Ե. Լալայեանի—«Ազգագր. Հանդէս», հատ. XII, եր. 131: Բորչալուի գաւառ՝ Ե. Լալայեանի—«Ազգագր. Հանդէս», հատ. IX, եր. 235.

5) Ե. Լալայեան—Գանձակի գաւառ, եր. 35—37.

6) Նոյն, Գողթան գաւառ, «Ազգագր. Հանդ.», հատ. XII, եր. 123.

7) Նոյն, Բորչալուի գաւառ, «Ազգագրակ. Հանդ.», հատ. IX, եր.

8) Նոր-Դար, 1895 թ. № 283

XV.

Մայրական ընտանիքի ազգակցական այդ առանձնայատուկ սկզբունքի վրայ էլ ստեղծւում են սրան համեմատ ազգակցական յարաբերութիւններ, որոնց մէջ մեծ նշանակութիւն են ստանում կանանց եղբայրները: Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ նախ՝ ամուսնական կապերն անհաստատ էին և երկրորդ՝ այդ կապերը ու յարաբերութիւնները միշտ խզւում էին նախքան երեսայի ծնուիլը, ուստի երեսայի աշխարհ դալով նրա միակ ծընողը մայրն էր համարւում: Երեսան ապրելով ու սնուելով միայն մօր ու սրա ազգականների մօտ, բարոյապէս ու նիւթապէս անշուշտ կապւում էր սրանց հետ, մանաւանդ իւր մօրեղբայրնեւ: Ի՞նչու յիշում էր սերնդական կազմակերպութիւնները հիմնուած լինէին մայրական իրաւունքի վրայ, այնուամենայնիւ սերնդի պաշտպանները արտաքին թշնամիներէ դէմ, պատերազմող, կըռռող տարրերը և վերջապէս որսորդներն ու նիւթական միջոցներ հայթհայթողներն այր մարդիկն էին, այսինքն՝ կնոջ եղբայրները կամ մօրեղբայրները: Ուստի մեծացող երեսան, տեսնելով որ իւր և մօր պաշտպանն ու նեցուկը նրա եղբայրն էր, անկասկած պիտի լցուէր որոշ ակնածութեամբ դէպի մօրեղբայրը, տողորուէր սերտ ազգակցական զգացմունքներով դէպի նա: Եւ անհամբերօր մեծ նշանակութիւնն աւանդաբար պահպանուել է հայ ժողովրդի հայեացքներում իբրև մնացորդները մայրական իրաւունքի տիրապետութեան շրջանից:

«Սասնայ ձուերի» ժողովրդական դիցապահական վէպի մի վարիանտում գտնում ենք հետևեալ կէտը: Սասնասարն ու Բաղդասարը, սպանելով իրենց քրիստոնեայ մօր խորհրդով կռապաշտ հօրը, փախչում են և մի ամայի տեղ վիթխարի շէնք ու գիւղ են կառուցանում: Երբ նրանք իրենց մօրը բերում են այդտեղ, վերջինս ասում է. «Գնացէք, ձեր քեռու մօտ, որ իմ ախպերն ա, պերէք ըստեղ որ հաստատուի գեղը»... 1) հետևապէս առանց մօրեղբօր չէր կարող զաւակների գիւղը հաստատուիլ և իւր անունն ստանալ: Յիրաւի որդիքը բերում են մօրեղբօրը, որ և հաստատում է գիւղը ու սրան որոշ անուն տալիս:

Մօրեղբօր նշանակութիւնն երևում է նաև նրանից, որ խնամախօսութեան դէպքերում շատ հայաբնակ գաւառներում սովորաբար երիտասարդներն մօրեղբայրներն են գնում աղջիկ ուղեւորել իրենց քոյրերի գաւակների համար, ինչպէս Գողթանում 2):

1) «Նոր-Դար», 1895 թ. № 213.

2) Ազգագրական հանդէս, հատ. IX, եր. 118.

Մեր ժողովրդի սովորութիւններում պահպանուել են բազմաթիւ հետքեր, որոնցից կարելի է եզրակացնել, թէ ինչ միտք դեռ էր խաղում երեւմե հղբայրը մայրական սերնդի մէջ, պաշտպան ու հովանաւորող հանդիսանալով իւր քորջը, ուրեմն և նրա զաւակներին: Քրոջ ու եղբոր միջև հաստատուում են ամենասերտ, ամենաբարեկամական յարաբերութիւններ, որոնք արտայայտւում են բացարձակ կերպով ժողովրդական երգերում, առածներում, երգումներում: Քոյրը միշտ երգւում է իւր «եղբոր ազիզ արեւով», «էն անուշ քիւր ու ախպերութիւն գիտենայ» և ընդհակառակն ամենաստակալի կերպով է հնչում քրոջ ալանջին այն անէծքը, երբ ասում են՝ «բու օխտը ախպերը մի պատանւոյ դնեմ» Դժւար է այն կնոջ դրութիւնը, որ եղբայր չունի, պաշտպան-կերակրող չունի:

«Սարերին ծաղիկ կ'լի,

Ոչխարին աղիք կ'լի,

Էն քիւրը, որ ախպեր չունի,

Սիրտը սև թաղիք կ'լի: 1)

Կամ՝

«Հարսնած էկաւ վերին կալերով.

Խինէն բերին թղթի ծալերով,

Ախպեր չունիմ, ձիու գիզկին խաղցնայ,

Տանի ճամբէն, բարով դարձնայ: 2)

Զարմանալի չէ, որ այդ բոլորից յետոյ եղբոր սէրը, եղբայր ունենալուն տենչն ու երջանկութիւնն այնքան զգայուն և բուռն շնչաւորով է հնչում հայ ժողովրդական երգերում, մանաւանդ ջանգիւլումներում: 3) Դա մի երեոյթ է, որ ոչ միայն մեր ժողովրդական երգերում, հայեացքներումն է տիրապետում, այլև շատ օտար ժողովրդներին, մանաւանդ սլաւոն ազգերի մէջ քրոջ ու եղբոր այդ սրտակից ու անխզելի կապերն ու յարաբերութիւնները կազմում են նրանց բանահիւսութեան գլխաւոր մօմենտները: 4)

Ժողովրդական սովորոյթը հասնում է օգնութեան նաև այնպիսի կանանց, որոնք չունեն եղբայրներ: Այս դէպքում դիմում

1) Ազգակրական հանդէս, հատ. XII, եր. 120.

2) Ազգազրական հանդէս հատ. XI, եր. 60՝ Բորչալուի ջանգիւլումներից:

3) Էմինիոն Ազգազրական ժողովածու, հատ. 2, եր. 36.

4) Համեմ. ջանգիւլումներ Աբարանի՝ Գարեգին Յովսէփեանի Փշրանքներ, եր. 73,—74, 139.

են ազգակցութեան ֆիկցիային, որ ստանում էր փաստային ազգակցութեան նշանակութիւն իւր բոլոր դրական իրաւաբանական հետեւեանքներով: Եղբայրադուրկ մի կին, երբ կարիք էր զգում մի եղբոր հովանաւորութեան, դիմում էր հոգեւոր ազգակցութեան, ընտրում էր տղային աղբէր» կամ «աւետարանի աղբէր», որը նրա համար արեւնակից եղբոր նշանակութիւն ունէր: «Ողջամաքոյր և ողջումեղբայր լինում են Զատկին. կինն ու տղամարդը միմեանց ողջոյն են տալիս և խնդրում են քահանային, որ իրենց գլխին աւետարան կարդայ: Շատ վաղ թոյլ չէր տրւում, որ մինչև եօթերորդ սերունդը միմեանց հետ խնամութիւն անեն:» 1) Ուրիշ տեղերում եղբայր և քոյր դարձողները ծակում են իրենց ճկոյթների ծայրերը և փոխադարձօրէն ծծում արիւնը, որից յետոյ նրանք պարտաւոր են իրար հաւատարիմ լինել մինչև մահ:» 2)

XVI

Եղբոր մեծ նշանակութիւնն, իբրև իւր քրոջ միակ պաշտպանի ու հոգատարի, իբրև քրոջ կեանքի ու ապագայի նեցուկի, աւելի ցայտուն արտայայտւում է հարսանեկան սովորոյթներում, երբ նրա քրոջը կնութեան են տանում մի օտար տուն, սովորոյթներում, ուր եղբայրը որոշ դեր է խաղում իւր քրոջ նկատմամբ: Հարսնեղբայրը պիտի թոյլ տայ, որ իւր տանից տանեն քրոջը. եղբորը պիտի վճարուի այն փրկանքը, որ հատուցանում էին փախցրած քրոջ համար. վերջապէս նրան էր պատկանում այն իրաւունքը, որով նա նորափեսային թոյլատրում էր իւր քրոջ կուտութիւնը խախտելու:

Զաւախքում հարսին իւր ծնողների տնից դուրս տանելիս, փեսացուի մակարները ահագին աղմուկով երգում են.

«Աղբոր շիւշէն կոտորեցին» 3)

Քրոջ վալէն պատռեցին» 3)

Արարանում հարսնածի ժամանակ հարսի եղբայրը նստում է սընդուկի վրայ, որի մէջ է բաժինքը և չի թողնում, որ տանեն հարսի հետ, մինչև որ իւր ընծան չստանայ, «Դութու նստեկէն» առնելուց յետոյ արդէն ազապները գոռում են՝ «տարան». և յի-

1) Բորչալուի՝ գաւառ Ե. Լ.-ի Ազգադը. հանդէս, հատ. X, եր. 132.

2) Зелинский—Народн.-юрд. обычаи заках. армянъ, եր. 6.

3) Ե. Լալայեան՝ Զաւախքի բուրժուներ, եր. 27.

բաւի միայն այդ ժամանակ հարսը դուրս է գալիս հօրանց տանից: 1) Գողթան գաւառում, երբ հարսը հասնում է նորափեսայի տունը, ներս չի մտնում. այն ժամանակ թագաւորի հայրը կամ մակարբային մի ընծայ՝ շորեղէն կամ դրամ է տալիս հարսն եղբօրը, որ թոյլ տայ հարսին տուն մտնելու: 2) Բուլանլիսում, նմանապէս և Զէյթունում, մինչ սկեսրայրը հարսի հետ դրսու դռան շէմքը ոտք կը դնէ, հարսի եղբայրներից մէկը դռան մօտ կանգնած կը ձգէ խնամու օձիքը և կը պահանջէ աղօր զօտին, որ ընդունւած սովորութեան համաձայն անպատճառ կը տրուի: 3) Գանձակի գաւառում, երբ հարսին եկեղեցի են տանում պսակելու, հարսնաղբէրը մի գդակ նւէր է ստանում թագաւորի տնեցիներից: 4) Զաւախքում, երբ հարսնածը գալիս է փեսի գիւղը, հարսի հետ են լինում նաև նրա 1—2 հարսնեղբայրը, Հենց որ նոր եկած հարսը փոքր ինչ հանգստանում է իւր հարսնեղբայրների հետ, երկու նշանաւոր թագուորցիք մի շիշ օղի առած գալիս են հարսնեղբայրներին տեսութեան: Այդ գիշեր թագուորցիք ու հարսնեղբայրները միմեանց վերաբերմամբ շատ զգոյշ են լինում, որովհետև առաջիններն աշխատում են մի որևէ բան գողանալ հարսի վերայից, որպէսզի հարսնեղբայրներին մի բանով տուգանքի ենթարկեն, իսկ վերջինները հնարում են փեսայի վերաբերմամբ մի լսան, կամ աշխատում են թոնրի պարագաներից մինը գողանալ, որ թագուորցիներից մի բան ստանան: Այսպիսի առերես լարուած յարաբերութիւնը մի մնացորդ է հայ սովորութեան իրաւունքի մէջ գոյութիւն ունիցած առևանգմամբ ամուսնութեան, ուր հարսի եղբայրները բնականօրէն պիտի թշնամանքով վերաբերուէին դէպի փախցնողները,՝ դէպի փեսան ու իւր ընկերները: 5) Նմանապէս Նոր-Բայազէտի գաւառում հարսնեղբօր ձեռքից է վերցնում փեսան նորահարսին. չքահանան գնում, բռնում է հարսնացուի կռնից, միւսից էլ հարսնեղբայրը և բերում կանգնեցնում թագուորի հանդէպ, ձեռք ձեռքի տալիս և սկսում է պսակի խորհուրդը: 6)

1) Գարեգին վրդ. Յովսէփեան՝ Փշրանք, եր. 61.

2) Աղգադրական հանդէս, հատ. XII, եր. 132.

3) Բէնսէ՛ Բուլանլիս, եր, 105. Ալահվերդեան—Ուլնիա կամ Զէյթուն:

4) Ե. Լալայեան—Գանձակ, բ. հատ, եր. 28.

5) Ե. Լալայեան—Զաւախք, եր. 143.

6) Աղգադրական հանդէս, հատ. XVI, եր. 25.

Հարսնեղբայրներն ամբողջ հարսանիքի ընթացքում, շարունակ իրենց քրոջ հետ անբաժան էին լինում մինչև առագաստի գիշերը: ¹⁾ Նրանք քրոջ հաւատարիմ պաշտպաններն են զանազան անհրեոյթ չարերից ու տեսանելի թշնամիներից: Գանձակի դաւառում հարսը եկեղեցի տանելիս հարսնեղբայրները երբեմն բռնում են թագուորի և խաչեղբոր փէշերից, որպէսզի թագուորի և թագուհու միջից չարամիտ մարդիկ չանցնեն ու դրանով թագուորը չհկապուին՝ չկորցնի իւր առնականութիւնը: ²⁾

Որպէս արդէն յիշել ենք, զօտին սիմբոլիական ձևով նշանակում է կնօջ կուսութիւնը, և ահա հարսը զգեստաւորուելիս, երբ պատրաստում է դուրս գալու իւր սենեակից ապազայ ամուսնու մօտ կանգնելու, նրա զօտին շատ տեղեւում կապում է ոչ թէ քաւորը, այլ հարսնեղբայրը, որով կարծես ցոյց է տալիս, որ իրեն է պատկանում իրաւունքը քրոջ պահպանելու: Կապելով զօտին, եղբայրը կարծես իրաւունք է տալիս փեսային տիրանալու իւր քրոջը և սրա կուսական մարմին: Արարանում հարսի եղբայրներից մէկը, զօտին ձեռքին բռնած չի կապում հարսի մէջքը, մինչև «ախրը զօտին» չէ ստանում: ³⁾ Նոր-Բայազէտի դաւառում հարսը երբ հագնւում է պսակ գնալու, կանչում են հարսնեղբորը զօտին կապելու, որ կապում է ասելով. «գնա, քուրս, Աստած քեզ հաց տայ»: ⁴⁾ Նոյնն է կատարւում Գողթանում՝ Ներքին Ագուլիսում: ⁵⁾ Իսկ Ջաւախքում եղբոր իրաւունքը իւր քրոջ կուսութեան նկատմամբ պարզ արտայայտւում է նոյն իսկ առանց որևէ սիմբոլների. հարսը գիշերը գնում քաւորին հանդեսնում է ու պառկեցնում. իսկ ինքը գալիս է հարսնեղբոր հետ է պառկում Փեսան էլ գնում մտնում է քաւորի ծոցը: ⁶⁾ Նմանապէս Արարանում նորահարսի կուսութիւնը տիրանալու. այդ իրաւունքը գնում է եղբորից որևէ ընծայաբերութեամբ. առաջատու մտնելուց առաջ թագ վերացումից յետոյ սկսւում է վերջին պարգևաբաշխութիւնը: Հարսնեղբորը մի հրացան կամ չուխայ են ընծայում, որ սովորաբար քրոջն է ընծայում՝ եթէ համապատասխան ընծայ չտուին փեսային: ⁷⁾

¹⁾ Ե. Լալայեան—Ջաւախք, եր. 146, եր. 121: Նոյն—Գողթան, Ազգագր. հանդէս, հատ. XII, եր. 131 Բենսէ Բուլանըլի, եր. 106.

²⁾ Ե. Լալայեան—Գանձակի դաւառ, հատ. Բ, եր. 29.

³⁾ Գար. վ. Յովսէփեան—Փշրանք, եր. 61.

⁴⁾ Ազգագրական հանդէս, հատ. XVI, եր. 24.

⁵⁾ Ազգագրակ. հանդ., հատ. XII, եր. 128.

⁶⁾ Ե. Լալայեան—Ջաւախք, եր. 150.

⁷⁾ Գ. վ. Յովսէփեան—Փշրանք, եր. 63.

XVII

Համեմատական ազգագրութիւնից յայտնի է, որ այն բոլոր ժողովուրդներն ու ցեղերը, որոնք տակաւին չեն թօթափել մայրական իրաւունքի սկզբունքների մնացորդները, այլ մարդը, ամուսնանալով մի կնոջ հետ, վերջինին չի տանում իր տունը, այլ թողնում է նրա ծնողների յարկի տակ և ինքը միայն յաճախում է երբեմնակի, այն էլ գաղտնագողի։ Մի քանի ցեղերի մէջ կնոջ ապրելը իւր ծնողների տանը տեւում է մի քանի ամիս կամ մի ամբողջ տարի։ Կովկասեան լեռնականներից խնասիրները սովորութիւն ունեն ամուսնանալիս իրենց կնոջը ամբողջ մի տարի թողնել նրա ծնողների տանը. նոյնիսկ տարի անցնելուց յետոյ այդ երկու ամուսինների կենակցութիւնը կատարւում է գաղտնի։ 1) Աֆրիկայի Սահարի տուրու անունով վայրենի ցեղի մէջ սովորութիւն է տիրում, որ մարդը ամուսնանալիս մի կնոջ հետ, վերջինիս բերում է իւր տունը, բայց կինը պարտաւոր է մնալ միայն 7 օր իւր ամուսնու մօտ և ապա վերստին երկար ժամանակով վերադառնում է իւր ծնող—մօր մօտ։

Հայ սովորոյթների մէջ պահպանուել է մի բնորոշ փաստ, որ յիշեցնում է վերոյիշեալ բարքերը, երբ կինը մնում էր իւր մօր մօտ, իսկ այդ մարդը իւր ամուսնական յարաբերութիւնների համար միայն գաղտնի յաճախում է նրան։ Դա այսպէս անուանած դարձի սովորութիւնն է, որ մեծ հանդիսաւորութեամբ է կատարւում հայաբնակ գաւառներում։ Բուլանըխում պահպւելուց 4—5 շաբաթ յետոյ սովորութիւն ունեն հարսի հերանք՝ վերադարձնել աղջիկը իրենց տուն։ Այդ դարձը կը կատարուի յատուկ հրաւիրակ կնոջ ձեռքով։ Մնալով 3—4 շաբաթ հէրանց տանը, վերադարձը նմանապէս փեսայի տան կողմից զնացող հրաւիրակ կնոջ ձեռքով կը կատարուի²⁾։ Նոյն դարձը տեղի է ունենում Վանայ հայերի մէջ³⁾։ Վայոց կորում ծաղկազարդին նորահարսը տարւմ է հէրանց մօտ, ուր մնում է մինչև Համարձումն, երբ տէգըը գալիս է տանելու նորահարսին, նախապէս իւր ւետ ընծաներ, ուտելիքներ՝ բերելով։ 4)

Բայց և միւս կողմից՝ մայրական գերդաստանի յետագայ զարգացման բնորոշ գծերից մէկն էլ այն է, որ երբ այլ ու կնոջ ամուսնական յարաբերութիւնները դառնում են տևողական, և

1) Լուծայ, 1904 թ. № 3, 157-158. Նաև Նոր-դար, 1893 թ. №№ 37-39.

2) Բենսէ. Բուլանըխ. եր. 114.

3) Վան—էԱրձազանք, 1897 թ. № № 17, 22, 23, 27 և 29.

4) Ազգագրական Հանդէս, հատ. XIII, եր. 166:

սկսւում է հիմք ստանալ մշտական կենսակցութեան սկզբունքը, այդ դէպքում ամուսինն ապրում է իւր կնոջ տանը և սրա մօր իշխանութեան ներքոյ: Կան մի քանի վայրենի ցեղեր, զորօրինակ՝ Դովալու (Բրազիլիայում, Բաէլ Աֆրիկայում և այլն, 1) որ ամուսնակցութեան դէպքում, ոչ թէ կինն է տեղափոխւում իւր ամուսնու տունը, այլ մարդն է տեղափոխւում իւր կնոջ ծնողների մօտ: Այդ սովորոյթների մնացորդները պահպանուած կան նաև հայերիս մէջ: Հին-Նախիջևանի շրջանի հայ գիւղերից մի քանիսում սովորութիւն է, որ եկեղեցական պսակի խորհրդից յետոյ երկու խնամիների փոխադարձ համաձայնութեամբ նորապսակ աղջկան բերում են իր հօր տուն և այստեղ անորոշ ժամանակ մնում է. այնուհետև նորից կրկնապսակի ծախսերով հարսանիք են անում և հարսին տղայի տունը տանում: Պարզ է, որ այստեղ նկատում ենք նոյն գաղափարի պահպանումն, որ ամուսնութեան կապից յետոյ կինը մնում է իւր մօր տանը: 2) Վայոց ձորում նորապսակները եկեղեցական պսակակցութիւնից մեծ հանգիստով վերադառնում են անպայման հարսի տունը, ուր նոյն երեկոյին, խնջոյքից յետոյ, բոլոր հիւրերը ցրւում են և երբ տանեցիները քնում են, փեսայի համար մի առանձին անկիւնում կամ ուրիշ սենեակում անկողին են պատրաստում ու տան հարսերից մինը նորահարսի կռնից բռնած՝ բերում է փեսայի մօտ և ինքը հեռանում: Թագուորը նուէր է տալիս հարսին իրը «բերնաբացէք», որից յետոյ սիրախօսում են մինչև լոյս: 3)

Արդեօք նոյն իմաստն չի պարունակում հայ ժողովրդի մէջ տարածուած «տնտեսութեան» սովորոյթը, երբ տղամարդը տեղափոխւում է ընդ միշտ իւր կնոջ յարկի տակ և սրա ծնողների իշխանութեանն է ենթարկւում: Ճիշտ է, այդ «տնտեսայութեան» գաղափարը հայ ժողովրդի մէջ ներկայումս միանգամայն ուրիշ բնաւորութիւն է ստացել, այսինքն՝ արու ժառանգից ղուրկ լինելով և երիտասարդ աշխատող ձեռքերի բացակայութեան պատճառով, որոշ ընտանիքներ իրենց համար «տնտեսայ» են բերում, բայց այդ հիմնարկութեան իրաւաբանական սկզբունքը ու գոյացման պատճառները պէտք է որոնել միմիայն մայրական իրա-

1) Липпертъ. Исторія культуры, кр. 171

2) Նոր-Դար, 1890 թ. № 17

3) Ազգագրական Հանդէս, հատ. XIII, կր. 150

ունքի գերդաստանական յարաբերութիւններում: Այս մեր ենթադրութիւնը հիմնադրում ենք նրանով, որ կան հայաբնակ գաւառներ, ուր «տնփեսայութեան» սովորոյթը գոյութիւն ունի նաև այնպիսի պայմաններում, երբ ընտանիքները ունեն արու ժառանգներ ու աշխատող ձեռքեր: Այդ կողմից մանաւանդ հետաքրքիր է տնփեսայութիւնը Տաճկաստանի Ակնայ հայերի մէջ, ուր վերոյիշեալ սովորութիւնը անխտիր ու խստիւ պահպանուած է. իւրաքանչիւր ընտանիք իր աղջիկը ամուսնացնելիս փեսային անպայման իր տանն է պահելու: ¹⁾ Թէ յիշաւի տնփեսայութիւնը մի մնացորդ է մայրական իրաւունքի մէջ տիրող սովորութեան, այն է՝ այր մարդու մնալը կնոջ մօտ, երևում է հետեւեալ ընտրոշ ու համատարած սովորոյթից:

Թայտնի է, որ հայ ժողովրդական հայեացքներում նշանադրութիւնն իբրև ամուսնական կապերը հաստատման մոմենտ, աւելի մեծ նշանակութիւն ունի քան եկեղեցական պսակի խորհուրդը. շատ անգամ փեսացուի ու հարսնացուի մէջ ամուսնական յարակցութիւնները կատարւում են նշանադրութիւնից յետոյ, մի փաստ, որ սովորութեան իրաւունքի համաձայն թոյլատրելի էր: Ամենուրեք հայ ժողովրդի մէջ սովորութիւն կայ, որ փեսացուն նշանադրութիւնից յետոյ պարտաւոր է ծածուկ և անտեսանելի կերպով թէ աներոջ կողմից և թէ թաղի երիտասարդների աչքերից յաճախել միշտ իւր նշանածին, ընդ մօին նա միշտ գնում է ընծաներով և որ գլխաւորն է ընդունւում է միշտ աղջկայ մօր կողմից ու հիւրասիրւում: Այս սովորոյթի ընտրոշ նկարագիրը Նոր-Բայազէտի հայրի բարքերից առաջ է բերում պ. Լալայեանը: «Հնումը նշանադրութիւնից երկու երեք շաբաթ յետոյ փեսացուն մի գիշեր մի քիչ չոր միքք և մի որևէ ընծայ կամ դրամ առած, գնում էր աներանց տուն իւր հարսնացուին տեսնելու: Զօքանջը ընդունում էր նրան և ցոյց տալով, որ աներն այդ մասին ոչինչ չգիտէ, ապա թէ ոչ կը բարկանայ և դուրս կանէ տանից փեսին, հիւրասիրում էր նրան ձուռծեղով, որի վրայ մի քանի կաթ իւր մէզից էր սրսկում, որպէսզի փեսի սէրը դէպի իւր հարսնացուն սաստկանայ: Զուռծեղ ուտելուց յետոյ հարս ու փեսան յաճախ փոքրիկ քենիկներից մինի հետ, առանձնանում էին մի որևէ սենեակ, ուր մինչև լոյս քնջում էին, սակայն հարսնացուն մինչև մի նուէր չստանար չէր սկսիլ փեսացուի հետ խօսել: Այս ընծան կոչւում էր «խօսալէ»: Այժմ

¹⁾ Ս. Հայկունի—Դէրսիմ «Արարատ» 1896 թ. եր. 280

գրեթէ ամեն շաբաթ երեկոյ փեսացուն առանց քաշուելու անհրոջից գնում է իւր հարսնացուի հետ գիշերելու և նոյնիսկ քնում նրա հետ միասին: Այս ծայրայեղութիւնը թոյլատրուում է, մինչդեռ ամօթ է համարուում ցերեկով աներանց տունը մտնել կամ աներանց ներկայութեամբ հարսնացուի հետ խօսելու: 1) Նոյնն ենք տեսնում Հին-Պայաղէտում և 2) այլ ուր 3) գտնում:

Այս սովորութեան մէջ մի գիծ է աչքի ընկնում, որ փեսան գնում է իւր ամուսնական յարակցութիւնների նպատակով հարսնացուի մօտ և այն էլ աղջկայ մօր ընդունելութեամբ, մինչդեռ այդ հարսնացուն ոչ մի իրաւունք չունի կեսրանց տունը ոտք դնելու մինչև պատկազրութիւնը: 4) Հետևապէս այստեղ էլ տեսնում ենք մայրական իրաւունքի այն շրջանից փափոքներ, երբ այր մարդը գնում էր իւր կնոջ մօտ և այնտեղ փնտռում, հպատակում իւր կնոջ մօրը ու ճանաչում միմիայն սրան: Յետագայում, երբ արդէն հայրիշխանութիւնն առաջացաւ, վերոյիշեալ սովորութիւնն իբրև Ֆիկցիա շարունակեց իւր գոյութիւնը, թէև սկզբներում յիշաւի ծածուկ միանգամայն տան նահապետից, որը հիմնուելով իւր իրաւունքների վրայ չպիտի թոյլ տար այդպիսի մի քայլ, իսկ յիտոյ երևի նահապետի կեղծեալ ու առերես ցոյց տուած անգիտութեամբ էր փեսան գիշերային այցելութիւններ կատարում: Իսկ այն հանգամանքը, որ թաղի երիտասարդներն թշնամաբար են վերաբերում այդ այցելութիւններին և ձեռք ընկած դէպքում լաւ ծեծում կամ ծաղրուծանակի են ենթարկում փեսային, նմանապէս ենթադրել է տալիս, որ յիշաւի դա հետևանք է մայրական իրաւունքների շրջանի տապալման և ընդհակառակն հայրիշխանութեան տիրապետութեանը, երբ բոլոր այր մարդիկ շահագրգռուած են, իբր թէ հայրիշխանական նոր գաղափարների ներքոյ ամեն կերպ հալածել մայրական իրաւունքի շրջանի ամուսնական յարաբերութիւնները:

1) Ազգագրական Հանդէս, XVI հատ., եր. 14—15.

2) Բիւզանդիոն, 1899 № № 684 և 685.

3) Ե. Լալայեան—Ջանգեղուրի գաւառ, եր. 71; Նոյն—Վարանդա, եր. 126; Նոյն—Գանձակի՝ գաւառ, եր. 19—20; Նոյն—Ջաւախք, եր. 129; «Ազգագրական Հանդէս», X հատ—Բորչալուի գաւառ, եր. 219.

Կիլիկիա—Կիւրին՝ Նոր-Դար, 1887, № 207.

Գիւղացու հարսանիքը՝ Նոր-Դար, 1889 № № 20—21.

4) Ե. Լալայեան—Ջաւախք, եր. 138

XVIII.

Ներկայ ժողովրդական սովորոյթների ընտանեկան սեփականատիրական իրաւունքում պահպանուել են հետաքրքիր մնացորդներ, որոնք որոշ չափով լոյս են սփռում երբեմն գերիշխող մայրական իրաւունքի վերայ: Գերդաստանական ընդհանուր ըստացուածքին կից, որ ճանաչւում է ամբողջ ընտանեկան համայնքի սեփականութիւն, ըստ սովորութեական իրաւունքի գոյութիւն ունի նաև կնոջ, այն է հարսի անձնական սեփականութիւնը, որի վրայ չէ տարածւում գերդաստանի միւս անդամների, նոյն իսկ հարսի ամուսնու իրաւունքները: Դա այսպէս անուանած արնադինն է առևանայերի մէջ, կամ Սարփան տաճկահայերի, այսինքն այն գումարը, որ պատկանում է միմիայն հարսներին ու կազմւում է նշանադրութեան, պսակադրութեան ու որդեծնութեան ժամանակները հարսին տրուած ընծաներից՝ զարդերից ու դրամներից: Կնոջ այդ գոյքը չի կարող խառնուել ամուսնու գերդաստանի համայնական գոյքի մէջ, շահագործուել նրա անդամների ձեռքով, որոնց կարծիքով ու համոզմամբ լինելայ բերած փողը մայր չի դառնայ: Բնորոշ է հայկական սովորոյթների ուսումնասիրութեան տեսակէտից այն հանգամանքը, որ հայ Դատաստանադրքերում, զորօրինակ Մխիթար Գօշի, պաշտպանւում է նոյն սկզբունքը՝ կնոջ բերած ու ստացած փողերի (ւտուայրիւ և ւերեսացտիսոյիւ) անձնական սեփականութիւնն ու անձեռնմխելութիւնը: Ինչ զաղափար է պարփակւում իւր մէջ սովորութեական այդ իրաւունքը, որի հիման վրայ միևնոյն տան մէջ խստիւ տարբերւում ու զատւում են համայնական գերդաստանական ստացուածքը և գոյքը կնոջ անձնական ստացուածքից՝ նրա արնադնից: Այստեղ պարզ արտայայտւում է այն սկզբունքը, որ տիրապետում էր երբեմն մայրական իրաւունքի շրջանում, երբ կանանց ստացուածքը, մայրական սեփականատիրութիւնը տրամադծօրէն բաժանւում էր այր մարդկանց ստացուածքից, երբ առնական ու կանացիական անտեսութիւնները միանգամայն իրարից անկախ ու զատ գոյութիւն ունէին:

Կանացի այդ առանձին սեփականատիրական իրաւունքը գտնւում ենք նաև օտար ժողովրդների և նոյն իսկ սրանց օրէնսդրութիւնների մէջ: Գերմանական միջնադարեան օրէնսդրքերը Lex Salica, Sachsenspiegel և այլն յատկացրած ունեն առանձին յօդւածներ (Lex salica XLIV, Sachsenspiegel B. I. art XX), ուր մանրամասն բնորոշւում են կանանց ու տղամարդկանց իրաւունքները իրենց ստացուածքների առանձին անձնական սեփականու-

թիւնների նկատմամբ: Եւ այդ յօդուածները մանրադնին Վերլուծումն ցոյց է տալիս, որ նրանց բովանդակութիւնը նախնական մայրական իրաւունքի սեփականատիրական հայեացքների մնացորդներն են:

Կանացի այդ անձնական սեփականութիւնից էլ առաջանում են առանձնայատուկ իրաւաբանական յարաբերութիւններ ժառանգական հարցում: Ինչպէս յայտնի է, ըստ հայ սովորութեան իրաւունքի աղջիկները զուրկ են ժառանգական իրաւունքից, իսկ այս դէպքում կանացի անձնական սեփականութիւնը ժառանգում է կանացի գծով, այսինքն ժառանգում են աղջիկները, թէև սրանց հետ միաժամանակ ժառանգում են նաև տղայքը: Բայց այդ վերջին երեոյթը՝ տղաների ժառանգումն՝ պէտք է համարել աւելի նորամուտ, որ կեանք է առիւ անշուշտ հայրիշխանութեան շրջանում: Ազգագրական նիւթերի մէջ առայժմ եղած փաստերը, որոնք թէև ժամանակի ընթացքում հայրիշխանական հայեացքների ներքոյ խիստ զուսաւորուել են արտապետող ազնատական ըսկզբունքներով, այնուամենայնիւ ցոյց են տալիս մեր յայտնած կարծիքի ճշմարտութիւնը, պարունակելով իրենց մէջ ակնյայտնի մնացորդներ մայրական իրաւունքի շրջանից: Կնոջ մահից յետոյ արնագինը մնում է մարդուն, եթէ սա բաժանուած է իր հօր գերդաստանից, իբրև մի առանձին սեփականութիւն, որի վրայ իրաւունք չունի տան ոչ մի անդամը. իսկ մարդու մահից յետոյ էլ այդ արնագին վրայ ժառանգական իրաւունք ունեն զաւակներն, այն էլ այսպէս. այդ գոյքի երկու մասը պատկանում է տղայ ժառանգներին, իսկ մի մասը աղջիկ ժառանգներին: ¹⁾ Բայց եթէ կինը վախճանուած է այն ժամանակ, երբ մարդը անբաժան է հօրական տանից, արնագին վրայ ժառանգական իրաւունք ունի ոչ թէ ամուսինն, այլ միայն զաւակները, որոնցից տղայքը նմանապէս ստանում են երկու մաս, իսկ աղջիկները մի մաս ²⁾: Սովորութեան իրաւունքի նոյն սկզբունքներով են տողորուած մեծ մասամբ նաև Մխիթար Գօշի Դատաստանագրքի յօդուածները կանանց առանձին սեփականութեան վերաբերմամբ: Մարդու մահուամբ անզաւակութեան դէպքում յանձնուած էր կնոջը իւր պատկանելիք սեփականութիւնը: ³⁾ Իսկ կնոջ մահուան դէպքում ժառանգական իրաւունքի մէջ զլիւսաւորապէս դեր էր խաղում այն հանգամանքը, թէ արդեօք ամուսինները զաւակի տէրեր էին, թէ ոչ: Եթէ կային

1) և 2) Зелинский, Народно-юридические обычаи закавказских армянъ եր. 33.

3) Մխիթար Գօշի Դատաստանագիրք, մաս II գ. 7:

որդիք այն ժամանակ ամբողջ մօրական կարողութիւնն անցնում էր սրանց, ճիշտ այնպէս՝ որպէս և հօրականը: Ընդհանրապէս կրնո՞ղ մահուամբ նրա ընչքի վերաբերմամբ ժառանգական իրաւունքն նոյն ծաւալով էր գործադրուում, ինչ ծաւալով և մարդու, և և անանց մեռելոց նոյն լիցի դատաստան, որպէս և արանց զինի մահանան և ուղղակի ժառանգների բացակայութեան դէպքում թի ցեղէ հօրն (կնոջ) ժառանգէ մինչև չորրորդ զարմոյ: 1) Ուրեմն այն դէպքում, երբ մայրական ինչքն անցնում է զաւակներին, նմանապէս և զաւակների հայրը հանդէս է զալիս իբրև իրաւագոր անձն, որ պատասխանատու է այդ ընչքի ամբողջութեան համար: Երբ առաջ զաւակն էր մեռած լինում և վախճանում էր մայրը, վերջինից փնայած գոյքը մի մասով անցնում էր ամուսնուն, իսկ միւս մասով կնոջ հօրը, եթէ վերջինս տակաւին ապրում էր: 2) Եթէ ամուսնութիւնն անգաւակ էր եղել՝ կնոջ մահումը սրա ինչքը անցնում է իւր հօրը, իսկ ամուսինն «վախճան միասին կենակցութեան» ստանում է միայն մասն, այն է, մի անգ (գոյքի 1/6-մասը): Բայց երբ բնաւ զուգաւորուած չեն եղել, և կինը վախճանւել է կոյս՝ այն ժամանակ ամուսինն ոչինչ չի ստանում և կնոջ գոյքը ամբողջովին անցնում է կնոջ ազգականներին:

Նման հայ սովորութեան իրաւունքի գերմանական հին ժողովրդական իրաւունքներում էլ հայրիշխանութեան շրջանում գտնում ենք կնոջ սեփականութեան ժառանգումն միայն կանացի դժով, որը համեմատաբար աւելի շեշտակի է արտայայտուում, քան հայկական պահպանուած սովորոյթներում: 3)

Կանացի ու այրմարդկանց տարբեր ու առանձնակի անկախ ընչական իրաւաբանական դրութեան երևոյթները նկատելի են ոչ միայն սեփականատիրութեան, այլ և տնտեսութեան գործունէութեան մէջ: Այն պատմական շրջանում, երբ մայրական իրաւունքի գերդաստանը քայքայուում էր և նրան կից սկսւում էր գլուխ բարձրացնել հայրիշխանութեան տիրապետութիւնն՝ անպայման ստեղծւում էր այնպիսի դրութիւն, որ գերդաստանական կազմը մի տեսակ երկւորութիւն է ստանում և այդ երկւորութեան սկզբունքի համեմատ էլ կուլտուրական այդ աստիճաններում ստեղծւում են երկու տարբեր տնային տնտեսութիւններ: Այդ տարբերու-

1) Մխ. Գօշի Դատաստանագ. մասն. I, գլ. ճիւր

2) Անդ:

3) Grimm-Rechtsaltertümer, եր 324

Թիւնն արտայայտուում է թէ ներքին և թէ արտաքին տնտեսութեան մէջ ու պահպանուել է որոշ չափով և ուրոյն բնոյթով նաև այն ժամանակ, երբ բացարձակ արդէն տիրում էր հայրիշխանական ընտանեկան կազմը: Այստեղ առաջին տեղը պիտի դնել այն հետաքրքիր երևոյթը, որ կանայք մեղանում միշտ ճաշում և ուտում են առանձին այրմարդկանցից: Վնահապետական կեանքը գերդաստանի անդամներին ըստ սեռի բաժանել է երկու խմբի, որոնց մէջ շատ քիչ հոգեկան կամ մտաւոր կապ կայ: Տըղամարդիկ առանձին, կանանցից դատ և նրանցից առաջ են ուտում, խմում: Իրենց տպաւորութիւնները ոչ թէ իրենց կանանց, այլ իրենց եղբայրներին, հօրը պատմում: զործի վերաբերմամբ տղամարդիկ դարձեալ միմեանց հետ են խորհուրդ անում: 1) Այս երևոյթը պէտք է բացատրել իբրև մի մնացորդ այն տնտեսական գործունէութեան, որի ժամանակ գոյութիւն էր ունեցել մարդկային ընտանիքի զարգացման մէջ, այն է, երբ տնտեսութիւններն տարբերուում էին նայած ուտելիք ձեռք բերելու եղանակներին, արդեօք ուտելու բարիքները այրմարդկանց թէ կանանց աշխատանքի արգասիքներ էին: Համեմատական ազգագրական հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ շատ ժողովրդների մէջ կանայք ու տղամարդիկ ոչ միայն առանձին են ուտում և ճաշում, այլ և միանգամայն տարբեր բաներ են ուտում, նոյն իսկ տղամարդիկ ու կանայք իրարից առանձին են պատրաստում իրենց կերակուրները: Հաւայեան կղզիների վրայ, երկու սեռի կերակուրները այնքան բաժանուած էին իրարից ժողովրդի հայեացքներում, որ շատ ուտելիքներ, որսերի ու ձկների որոշ տեսակները կանայք իրաւունք չունէին ուտելու և համարուում էին վերջինների նկատմամբ տարու, այսինքն արգելուած սրբութիւն, և միայն այր մարդիկ էին ուտելու: 2) Նոյնն էր տիրապետում հին Կրէտէում, Սպարտայում, ուր այրմարդիկ առանձին հասարակական ճաշ էին ուտում, այսպէս անուանած Սիսիտիա, բացառապէս մսեղէն գործածելով, իսկ կանայք ու զաւակները իրենց ընտանիքներում, ուտելով միայն գլխաւորապէս բուսեղէն: Մսեղէնը ճանաչուում էր բացարձակ այրմարդկանց աշխատանքի արգասիք, որովհետև որսորդութեամբ զբաղւում էին լոկ այրմարդիկ:

Երկու սեռի տնտեսական գործունէութեան և ընտանիքների տնտեսութեան տարբերութեան հազիւ նշմարելի մնացորդներ մասամբ գտնում ենք նաև հայ նահապետական գերդաստանում,

1) Ե. Լալայեան—Գանձակի գաւառ, հատ. բ., եր. 63.

2) Липпертъ—Исторія семьи, եր. 42.

ուր ամբողջ տնտեսական գործունէութիւնը բաժանուած է երկու տեսակ աշխատանքի՝ զրօք ու ներսի։ Դրսի, գլխաւորապէս դաշտային ու շինական աշխատանքները կատարում են այրմարդիկ տան—մեծի, նահապետի ղեկավարութեամբ, որը շատ անգամ ինքըն անձամբ անմիջապէս չի մասնակցում այդ աշխատանքներին, այլ միայն ղեկավարում, տնօրինում է աշխատաւոր ձեռքերը, որոնք ըստ սովորութեան արդէն մի անգամ առ միշտ սահմանուած են ընտանեկան սովորութիւններով և անյողողող պահպանւում են։ Ժողովրդական առածը ասում է՝ «մարդը զրսու պատ է, կնիկը ներսի»։ Ինչպէս այրմարդիկ գուրսը, նոյնպէս էլ կանայք ներսըն են աշխատում, և այդ աշխատանքն ըստ հասակի ու իրենց դրութեան բաժանւում է բոլոր կանանց մէջ, մօր, տատի այսինքն նահապետի կնոյ (եթէ վերջինս կենդանի չէ, այն ժամանակ ամենաւագ հարսի) ղեկավարութեան տակ է գտնւում ընտանիքի ներքին կառավարութիւնը։ Նա էլ նոյնպէս «անսահման իշխանութեամբ կառավարում է տան գործերը և հրամայում է հարսերին, նա է աշխատանքի բաժանողը։ Առանց նրա թոյլտւութեան ոչ մի հարս չի կարող բանալին վերցնել և մի պատառ հաց անգամ հանել»¹⁾

XIX

Մայրական իրաւունքի գերդաստանական կազմի էական սկզբունքն ու հիմքը եղել է բացառապէս ազգակցութիւնը մայրական գծով, կոգնատական սիստեմը, և այդ կազմը պահպանւում էր, մինչև որ նրա տեղը յետագայում գրաւել է սոցեալ-իրաւաբանական յարաբերութիւնների մի այլ միջնորդ, ուր տիրապետում է արդէն հայրական իրաւունքը, հայրական գծով ազգակցութիւնը, հիմք է առնում ակնատական սկզբունքը, նահապետական գերդաստանի՝ պատրիարխատի այդ էական գիծը։ Ինչպէս կատարուեց այդ էվօլյուցիօնը, ինչպէս մայրական իրաւունքի վրահիմնուած սերունդները վերջում փոխուեցին ակնատական սերունդներին։ Այդ հարցի նկատմամբ բազմօթիւ, ստէպ իրար հակասական կարծիքներ են տիրապետում։ Աւելորդ ենք սեպում առաջ բերելու այդ բոլոր կարծիքները, բայց դրա փո-

¹⁾ Ե. Լալայեան—Ջաւախք, եր, 177-178. նմանապէս՝ Բէնտէ—Բուլանիւի, եր. 146. Зелинский, Н. родно-юридические обычаи закавказских армян, ер. 24—25.

խարէն արժարժեքնք այդ էվոլյուցիօնի տրամաբանական բացատրութիւնն, որ անուս է Մակ. Կովալսկին, ¹⁾ Դարգունը ²⁾ Լիպպերտը, ³⁾ և այլ մի քանի ակնյայտնի գիտնականներ: ⁴⁾

Մայրական իրաւունքի սերնդական կազմի տարրալուծումն կատարուել է տնտեսական ազդակների ներքոյ: Տիրապետող մայրական իրաւունքի ներքոյ տակաւին գոյութիւն ունի մի համատարած սովորութիւն, որ այլ մարդը տեղափոխուում էր ու մշտնութեամբ իւր կնոջ սերնդական խմբակցութեան մէջ, ենթարկուելով այդ սերնդի իշխանութեանը՝ նահապետին, որ լինում էր սովորաբար կնոջ մօրեղբայրը կամ եղբայրը: Հէնց այդ հանգամանքն էլ աստիճանօրէն նպաստեց հայրական ազգակցութեան գոյացմանը, որովհետեւ մայրական իրաւունքի վերայ կազմակերպուած ցեղական խմբակների մէջ սկսեցին ծագել առանձին, աստիճանաբար բաժանուող, անջատուող գերդաստանական տնտեսութիւններ, սրանց գլխին էր անցնում սկզբից՝ կամ ժամանակի ընթացքում ընտանիքի հայրը: Այդ հայրական ընտանիքը, որ հանդէս է գալիս իբրեւ գերդաստանական մի համայնք, տակաւին նախքան հայրիշխանական սկզբունքներով տոգորուելը, արդէն կարողանում է մայրական իրաւունքի կազմակերպութեան նեղացած, սեղմուած շրջանակները քայքայել ու նրա փոխարէն մի նոր տիրապետութեան ու նոր ժառանգական յարաբերութիւններին համապատասխանող ազգակցական սխտեմ ստեղծելու: Պարզեք այս միտքը:

Ցեղական մայրական խմբի գերաբնակչութիւնը տակաւին որսորդական շրջանում առաջ է բերում համայնակեցութեան մէջ որոշ ներքին փոփոխութիւններ, կենցաղի նոր ձևեր ու եղանակներ: Խմբերը զգալով, որ երկրի հրապարակը իւր բնական բարիքներով այլ ևս չի ապահովացնում իրանց կենսական գոյութիւնը, ցրւում են, նորանոր տեղեր որոնելու իրենց որսորդական տնտեսական գործունէութեան համար: Խմբերը, անջատուելով իրարից և բաժան-բաժան լինելով, թուլացնում էին ցեղական նահապետի այս դէպքում կնոջ մօրեղբոր կամ եղբոր՝ իշխանութեան անմիջա-

¹⁾ М. Ковалевский Первобытное право, вып. I, Родъ стр. 150—197.

²⁾ Dargun-Mutterrecht u. Vatterrecht, Leipzig h. 117-134 1892.

³⁾ Липпертъ—Исторія Культуры, кр. 175-180, նաև սրա՝ Происхождение и развитие семьи.

⁴⁾ L. Morgan—Die Urgesellschaft, կայ նուսերէն Թարգմ. Де Морганъ—Первобытное общество,

Dr. Postdos familienrecht

Ճան ազդեցութիւնն կանանց հետ կենակցող այրմարդկանց վրայ, Ուստի այր մարդն իւր կնոջ վերաբերմամբ սկսում է կամաց կամաց ստանալ այն դերն ու նշանակութիւնը, ինչ որ ունէր կնոջ եղբայրն կամ մօրեղբայրը, իբրև միակ կերակրողն ու հոգատարը: Զարմանալի չէ, որ արիական լեզուներում եղբայր և մօուսին բառերը արտայայտւում են միևնոյն տերմինով: Այր ամուսնու գրաւած նոր դերը իւր կնոջ վերայ յանկում է նրանով, որ մարդը կնոջ վերաբերմամբ քայլ առ քայլ սկսում է ձեռք բերել այն իշխանութիւնը, որ առաջ պատկանում էր կնոջ եղբորը կամ մօրեղբորը: Այս վերջին հանգամանքը աւելի նպաստաւոր զարգացումն է ըստանում, երբ ժամանակների ընթացքում կանանց առևանգման սովորոյթը փոխւում է փրկանքի կամ գլխազնի վճարումով կին բերելու սովորութեանը, որով կինը դասուած է արդէն գնուած ապրանքի շարքը, սեփականութեան գաղափարի մէջ:

Ակնհերև է, որ եթէ այր մարդը այսպիսով իշխանութիւն է ստանում իւր կնոջ վրայ, ժամանակի ընթացքում նա ձեռք է բերում նաև իրաւունքներ այդ կնոջից ծնուած բոլոր երեխաների վրայանալու, թէ ումից էլ նրանք սերուած լինէին: Հօր ծնողական այդ իրաւունքի սահմանումն, իբրև հետևանք մարդու կնոջ վրայ ունեցած իրաւունքի, տեղի է ունենում համեմատօրէն դիւրին ու արագ, քանի որ ժամանակների ընթացքում երկու սեռերի միջև եղած կապակցութիւնն ու միութիւնն աւելի տևողական, մշտնջենական են դառնում: Բնակարանների ցրուածութիւնը, լաւ ու բարդ յաջող պայման է այդ տեսակ կենակցութեան ծաղկման, որովհետև դորանով դժուարանում է կիների փոփոխումն և ընդհանրապէս զանազան կիների հետ յարաբերութիւններ ունենալու հնարաւորութիւնն, այն ըստ իւր կարգի կարելի է դարձնում սովորութեան ոյժի ազդեցութեան ներքոյ այն կապերի ամրապնդմանը, որոնք սեռական ձգտումները վրայ են հիմնուած:

Ահա կապերի այդ ամրապնդումն ու տևողականութիւնն է ստեղծում պայմաններ, ուր զաւակները մեծանում, մնում են մօր ու հօր ներկայութեամբ: Ուրեմն զաւակները, տեսնելով միշտ իրենց հօրը, ճանաչելով նրա անձն ու նրանց համար տարած հոգսերը, անշուշտ կրկապուէին իրենց հօր հետ. մի կապ, որ նախ ընթաց շրջաններում անհնարին էր:

Միև կողմից էլ, նախնական սերնդական խմբակցութիւնների տնտեսական գործունէութեան ձևերը գերաբնակչութեան ազդեցութեան ներքոյ փոխւում են, անցնելով որսորդականից անասնապահական ու երկրագործական ձևերին, այն ժամանակ արդէն վերջնականօրէն հաստատոււմ և ամրանում է

հայրիշխանութեան գաղափարն, որ, ինչպէս տեսանք արդէն, ըսկսել էր գոյանալ նախընթաց շրջանում: Սրանով մայրական իրաւունքի սերնդական կազմակերպութիւնները իսպառ քայքայուում, տապալուում ու նրանց աւերակների վրայ բարձրանում է ազգակցական և սոցիալ-իրաւաբանական յարաբերութիւնների նոր շէնքը: Շնորհիւ այն հանգամանքի, որ արտադրողական այս նոր ձեւերի մթնոլորտում, ինչպէս և մի ժամանակ որսորդական շրջանում, այրմարդն էր գլխաւոր գործողը, այսինքն՝ սա էր անասնապահութեամբ ու երկրագործութեամբ պարապում, նրա ձեռքումն էր կենդրոնացած տնտեսական գործունէութիւնն, ուստի և այրմարդը ձեռք բերեց որոշ ինքնուրոյնութիւն, տնտեսական անկախութիւն և վերջապէս անձնական ազատութիւն, որոնցից նա զուրկ էր, ապրելով մայրական սերունդներում, իւր կնոջ հետ կենակցելիս: Մարդու նիւթական այդ անկախութիւնն բնականօրէն պիտի քայքայէր, կազմալուծէր նախկին կապերը, որոնցով կանգուն էր մայրական սերունդը: Բարիքներէ՛ յաւելեալ արդիւնքների պաշարի կուտակումն այրմարդու ձեռքում, որոնք նա գործադրում էր իւր կնոջ ու զաւակների և ընդհանրապէս գերդաստանի անդամների կեանքի գոյութեան համար, ըստինքեան առաջացրեց մարդու սեփականատիրական իրաւունքի գաղափարի ամրապնդումն, մի գաղափար, որ իւր կարգին էլ կնոջը և ամբողջ գերդաստանը հպատակեցրեց այր ամուսնու իշխանութեանը, դրեց նրանից կախեալ դրութեան մէջ: